Արձանագրություն N 2

«ԱՐՁՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2021/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Արզնի 18 օգոստոսի, 2021թ.

Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Նադոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Հարությունյանը և Կ. Իսակովա
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մովսիսյան

## I. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

---

(Զ. Նադոյան)

**1.1. Ընդունել ի գիտություն, որ.**

Հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ. -ի օգոստոսի 16-ին ժամը 10:00-ին: Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Կազմակերպության անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1 | «Մանուկյան Շին» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, գ. Կանաչուտ, Այվազովսկու 18<br>Էլ. փոստ՝ manukyanshin@mail.ru |
| 2 | «Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ | ՀՀ ք. Չարենցավան 4-րդ թաղամաս 9-րդ շենք բնակարան 5<br>Էլ. փոստ՝ ashprazyan@gmail.com |
| 3 | «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ | ՀՀ ք. Երևան, Փափազյան 8<br>Էլ. փոստ՝ mariakhachaturyan@tconstruction.am |
| 4 | «Էներգացանցշին» ԲԲԸ | ՀՀ ք. Երևան, 0037, Բաբայան փող. 10/1<br>Էլ. փոստ՝ mllenergy@yandex.ru |

**1.2. Հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունն հրավերով սահմանված կարգին.**

Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարները համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.3. **Բացված ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4. 3 կետի «ե» ենթակետի 4-րդ մասին և 7-րդ բաժնի 7. 1 կետին: Մասնավորապես.

- «Մանուկյան Շին» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովում: Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 8-րդ բաժնի 2-րդ տողում սխալ է նշված ծավալը, որի արդյունքում նույն տողի «ընդամենը» արժեքը սխալ է հաշվարկվել:
- «Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի «ընդամենը տոկոսներով» սյունակում նշված են հրավերով սահմանված կշիռները՝ առաջարկվող արժեքի համապատասխան կշիռների փոխարեն: Միաժամանակ՝ գնահատող հանձնաժողովը, ծավալաթերթ-նախահաշվի ստուգման նպատակով իրականացված հաշվարկների արդյունքում արձանագրել է, որ իրական կշիռները չեն գերազանցում հրավերով սահմանված թույլատրելի շեմը:
- «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովում: «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 1-ին բաժնի 4-րդ տողում սխալ է հաշվարկվել ընդամենը արժեքը: Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի «ընդամենը տոկոսներով» սյունակում նշված են հրավերով սահմանված կշիռները՝ առաջարկվող արժեքի համապատասխան կշիռների փոխարեն:
- «Էներգացանցշին» ԲԲԸ -ն չի ներկայացրել հայտի ապահովում: Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 8-րդ բաժնի 2-րդ տողում սխալ է նշված ծավալը, որի արդյունքում նույն տողի «ընդամենը» արժեքը սխալ է հաշվարկվել: Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի «ընդամենը տոկոսներով» սյունակում նշված են հրավերով սահմանված կշիռները՝ առաջարկվող արժեքի համապատասխան կշիռների փոխարեն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.4. **Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.**

1.4.1 «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2021/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինն է.

| Չափաբաժին | Անվանումը | Նախահաշվային արժեք /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| *1* | ***Արզնի համայնքի արտաքին լուսավորության ցանցի իրականացման աշխատանքներ*** | **34 993 670** |

1.4.2 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

| *Չափաբաժին No.* | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | «Մանուկյան Շին» ՍՊԸ | 22 124 135 | 4 424 827 | 26 548 962 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Աշոտ և Հայկ Եղբայրներ» ՍՊԸ | 27 916 667 | 5 583 333 | 33 500 000 |
| | «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ | 27 236 145 | 5 447 229 | 32 683 374 |
| | «Էներգացանցշին» ԲԲԸ | 24 998 562 | 4 999 712,4 | 29 998 274,4 |

1.4.3 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.5. **Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.**

Հրավերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**II. Գնանշման հարցման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին**

---

(Զ. Նադոյան)

2.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3–րդ կետերը, ՀՀ Կառավարության 2017թ. -ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Զ. Նադոյան)

3. «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՇՁԲ-2021/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 2021թ.-ի օգոստոսի 19-ին ժամը 17:00-ին, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Արզնի, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6 համայնքապետարանի վարչական շենք N-1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Զաիլ Նադոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Նելլի Հարությունյան

Կլարա Իսակովա

Հանձնաժողովի քարտուղար ՝ Մարի Մովսիսյան